ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1957 Общественные науки

Գր. Գրիգորյան

ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ԿԵՐՊԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐԸ

Փոքր Մհերը «Սասնա Ծռեր» էպոսի հերոսական սերնդի վերջին շառավիղն է։ Էպոսի չորրորդ ճյուղը նվիրված է նրա հալածական ու հերոսական կյանքի պատմությանը։ Ի տարբերություն նախորդ ճյուղերի, այս ճյուղի դաղափարական բովանդակությունը, կոլիզիան, շահագործողների և ընդհանրապես «չար աշխարհի» դեմ Մհերի միջոցով ժողովրդի մղած սոցիալ-դասակարգային անհավասար ու տևական կռիվներն են, որոնք էլ հենց հանդիսանում են Մհերի կերպարի կազմավորման հիմքը։ Նա իր հասարակական վարքագծով և անհատական բնավորությամբ ոչ Սանասարն ու Բաղդասարն է, ոչ էլ մեծ Մհերը ու Դավիթը, որովհետև այլ են իրեն և նրանց ծնող սոցիալական հարաբերությունները, այն տիպական հանգամանքները, որոնց մեջ կազմավորվում են նրանք։ Այլ կերպ ասած Մհերն ամբողջապես նոր հանգամանքների ու կերտվածքի մարդ է. թե իբրև ընդհանուրի կրող և թե իբրև անհատականություն։ Այս չի բացառում, իհարկե, նրանց միջև եղած ընդհանրություններն ու նմանությունները, որոնք անխուսափելի են հանուն ժողովրդի անձնուրաց մարտնչող հերոսների համար, որքան էլ ժամանակի առումով նրանք հեռու լինեն իրարից։ Նախորդների հետ Մհերի իբրև ժողովրդական ռեալ հերոսի նմանությունների մասին խոսք կլինի հետագա շարադրանքի ընթացքում, այժմ համառոտակի նշենք նրա կերպարի միֆական մի քանի գծերը միայն, որոնցով նույնպես նա սերտորեն առնչվում է ինչպես Սանասարի ու Բաղդասարի, այնպես էլ հոր ու առանձնապես պապի հետ։

Մհերի կերպարի միֆական գծերից մեկը հրեղենությունն է. նա կրակ է, «խրեղեն» և «անձնահուր», ինչպես որակում է էպոսը։ Վիպասաններն այդ հաստատում ու կոնկրետացնում են հետևյալ մի քանի բնորոշ տվյալների հիման վրա։

Դրանցից առաջինը փոքր Մհերի և պարոն Աստղիկի կռվի միջադեպն է։ Այս միջադեպից իմանում ենք, որ երբ պարոն Աստղիկը թևավոր ձին նստած հարվածում է Մհերին, նրա թրից

բուռ-բուռ կրակ կլցվի վար մատալին,
Մատալից շուռ կանցնի գետին, կերթա հանդունդը։
Ա. 182

Թուր կայծակին իր մեջ խտացնում է կրակը, կայծակը։ Թուր կայծակի հարվածը և նրանից թափվող կրակը ոչ միայն ժայռեր է կտրում, ինչպես վկայում է Քեռի Թորոսը, այլև մոխրացնում է Սասնա ժողովրդի թշնամիներ Մսրա Մելիքին և մյուսներին։ Նման հատկություն ունեցող թուր կայծակին, չնայած բուռ-բուռ կրակ է թափում Մհերի ղլխին, բայց և այնպես նրան սպանել, մոխրացնել չի կարողանում։ Սրա պատճառն, անշուշտ, այն է, որ փոքր Մհերը միևնույն տարերքի մարմնացումն է, «խրեղեն» է և «անձնահուր»։

Նույն տարերքի մարմնացումն է նաև մի այլ անգամ նրա դեմ կռվի ելած Աստղու Ցոլածինը։ Սա Մհերին հարվածելու համար պարոն Աստղիկի նման կայծակե թուր չունի իր ձեռքում, որովհետև ինքը հենց կայծակ է, ցոլածին, և ոչ էլ թևավոր ձի վեր բարձրանալու, որովհետև գտնվում է վերևում՝ երկընքում, այլապես վիպասանները չէին ասի, թե «Մհեր զարկից զԱստղու ցոլածին բերեց ցած»։ Այժմ, քանի որ երկնքում գտնվող Աստղու ցոլածինը իբրև կրակ և ցոլածին արև չի կարողանում մոխրացնել Մհերին, ապա պետք է ենթադրել, որ Մհերը նույնպես կրակային էություն է, կրակ է և արև։ Այսպիսով, Մհերն ու Աստղու Ցոլածինը միևնույն տարերքի՝ արևի տարբեր արտահայտություններն են ու նրա պաշտամունքի հետքերը, թեև միևնույն հնությունը չունեն։ Աստղու Ցոլածնի «կերպարի» կոսմիկ գծերը ցույց են տալիս, որ նա միֆական մտածողության ավելի վաղ շրջանի արդյունք է, քան Մհերը և նրանց կռվի մեջ, ըստ էության, արտացոլված է արևի աստվածության կամ պաշտամունքի հին և նոր պատկերացումների միջև եղած կռիվը։ Ինչպես միշտ և ամենուրեք, այնպես էլ այստեղ՝ հաղթանակում է նորը։ Աստղու Ցոլածնի նկատմամբ Մհերի տարած հաղթանակը հենց դրա արտահայտություններից մեկն է։

Մհերին Միհրի, իսկ սրան էլ Միթրայի հետ կապելու և նրա կրկնակը համարելու հանգամանքը նկատի առնելով պետք է ենթադրել, որ հիշյալ կռիվը միևնույն ժողովրդի տարբեր շրջանի պաշտամունքների միջև եղած կռիվ չէ միայն։ Այն, ըստ երևույթին, միաժամանակ և գերազանցապես արևի պարսկական ու հայկական պաշտամունքների միջև եղած կռիվ է։ Հայաստանում երկար ժամանակ իշխել է արևի իրանական պաշտամունքը, որը, սակայն, մերժվել է նույնը յութովի պաշտող հայի կողմից։ Եվ ահա կռիվ է առաջացել արևի պաշտամունքի կամ աստվածության բուն հայկական և իրանական պատկերացումների միջև, որն ավարտվել է հայկականի հաղթանակով։ Արև Մհերի հաղթանակը Աստղու Ցոլածնի նկատմամբ այդ կռվի ու հաղթանակի հեռավոր արձագանքն է։ Եվ դա երևում է ոչ միայն նրանից, որ Մհերը իր հակառակորդ Աստղու Ցոլածինին համարում է իր աստվածը, ինչպես ուժի ճնշմամբ համարել էր ժողովուրդը, այլև նրանից, որ նա Ցոլածնին սպանելուց հետո վճռում է «աշխարքեն» վերացնել նրա պաշտամունքը, որին վիպասանները տալիս են «կռապաշտություն» անունը։

Ըսեց.— Ջանըմ, ես կըսիմ՝
Դեմի իմ ասծուն իմ դըրբ չթալիմ,
Ի՞նչ չէ Աստղու Ցոլածին սպանել չաթին ա՞։
Ջնեղ ու անեղ դեղեց Մհեր,
Ջարգեց, զԱստղու Ցոլածին բերեց ցած.
Որ զԱստղու Ցոլածին սպանեց,

. . . . . .

Ըսեց Թրխ ուխտ եղնի ընձի,
Հարի ես կռապաշտութեն
Աշխարքեն չջարգեմ, վերջացում
Իմ դոշակ՝ Գոհարի մոտ չերթամ։

. . . . . .

Ըսեց.— կնիգ, ես կերթամ
Կռապաշտներու քոք կը կըտրիմ։
. . . . . .
Մհեր ելավ ընկավ ուր ճամփան.
Յոթ տարի կովով գնաց։
Մհեր կռոցտուն առավ։
Բ. 347—348

Կռապաշտ անվան տակ վիպասանները տվյալ դեպքում նկատի ունեն ոչ թե հեթանոս հայերին, այլ մահմեդականներին, հետևապես նաև պարսիկներին։ Այս տեսակետից Աստղու Յոլածինը Մհերին ներկայանում է իբրև այնպիսի կռապաշտ, ինչպիսի կռապաշտ էր Սանասար—Բաղդասար եղբայրների համար նրանց հայր Բաղդատի Խալիֆը, որին սպանելուց հետո նրանք Մհերի նման անխնա ջարդում են նրա կռքերն ու ավերում կռքատունը։ Այսպիսով, մերժելով Աստղու Յոլածնին ու կռապաշտությունը ժողովուրդը Մհերի մեջ ու Մհերի միջոցով պաշտպանել ու հաստատել է կրակի կամ արևի բուն հայկական պաշտամունքը։

Մհերի հրեղենությունը կամ արևային էությունը հաստատվում է մի ուշադրավ փաստով ևս։ Վեպի մի քանի պատումներից իմանում ենք, որ քարայրում փակված Մհերի գլխավերևում վառվում է մի անշեջ կրակ, որից կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանդչում է իր տան ճրագը։

Ան իրիկվան մեկ մարդ հուր ախչկան կասը.
— Ալի կինա ժամ, մոմ կպը, օխնուկ կրակ առ պի։
Ախչըկ կրնը տուս, կիրիշկը, կը տեսնա
Էդա քարեն ճրագի բուխ կըլնը.
Էդ ախչիկ ելավ կինաց են ումուտով, թը ժամն ի,
Մտավ տնդեղ, ճրագ կպուց։
Ա. 244

Ոչ մի հիմք չկա քարայրում, Մհերի գլխավերևը վառվող ճրագը պատահական համարելու։ Ընդհակառակը՝ առաջադիր հարցի տեսակետից ճրագի դոյության փաստը միանգամայն օրինաչափ երևույթ է։ Ճրագը՝ այդ կրակն է, ճրագը և Մհերը միևնույն տարերքի (կրակի—արևի) տարբեր արտահայտություններն են, տվյալ դեպքում առաջինի առկայությամբ ու միջոցով բացահայտվում է երկրորդի (Մհերի) էությունը։ Այս է պատճառը, որ նրանք գտնվում են իրար մոտ և պատկերված են միասին։ Իսկ եթե նկատի ունենանք նաև, որ Մհերին դեպի քարայր առաջնորդող հրաբեր ագռավը — «արևի սուրհանդակն է», որ արևելք նայող Մհերի դուռը, որի հետև փակված է դյուցազնը՝ արևի սիմվոլն է, որ քարայրը միհրական տաճարների հետքն է, իսկ քարայրի առաջ եղած դոգավոր ծառը («Մեկ կոքվը ծառ կըեր, էլ բան չըկեր» Ա. 64) արևի նյութական արտահայտությունը, ապա միանգամայն պարզ կդառնա, որ Մհերը կրակի, արևի մարմնացումն է, կրակ է ու արև, ինչպես պապն ու մյուս նախորդները։

Այս բոլորը վկայում են, որ Մհերը էպոս է մտել սկզբնապես իբրև կրակի կամ արևի աստված։ Թե որքան ժամանակ է մնացել իբրև այդպիսին դժվար է ասել։ Որոշակի կարելի է ասել միայն, որ կրակ կամ արև Մհերը հետագա

դարերում հետ է մղվել։ Պատմական զարգացման նոր պայմաններում, նոր իրադարձությունների աղդեցությամբ (ժողովրդի ֆիզիկական ընաջնջման սպառնալիք, սոցիալական դաժան ճնշում, պայքար հարստահարիչների դեմ և այլն) ձևավորվում է նոր Մհեր, որն աստիճանաբար դառնում է ժողովրդի իրական-պատմական հերոսամարտերի և լավագույն ձգտումների մարմնացումը։ Այսպիսով նա Էպոսի հերոս է դառնում ոչ թե իր մեջ խտացված վաղնջական բարացած պատկերացումներով, այլ ժողովրդի աղատագրության համար մղած հերոսամարտերով։ Մհերը հենց այդպիսին էլ մնում է ներկա վիճակով մեզ հասած Էպոսում։ Այս նշանակում է, որ մենք գործ ունենք ոչ թե մեռած պատկերացումների բեկորի, այլ դարերի անմիջականությամբ շնչող, կենդանի և խորապես ռեալիստական-էպիկական կերպարի հետ, որը ներկայացնում է իրեն ստեղծող ժողովրդին պատմական զարգացման նոր պայմաններում՝ սոցիալ-դասակարգային հակամարտությունների համեմատական սրման պայմաններում։ Սակայն նա իր գործունեության հենց սկզբում չէ, որ արտացոլում է այդ հակամարտությունները և հանդես գալիս իբրև ժողովրդի սոցիալական դարավոր պայքարի հերոսամարտիկ։ Նա այդպիսին դառնում է կենսական որոշ ուղի անցնելուց հետո, իսկ մինչ այդ զբաղվում է արտաքին զավթիչների դեմ մղած պայքարով, շարունակում պապի և հոր գործը։

Դավիթը Մսրա Մելիքին և մյուս զավթիչներին սպանելով միայն որոշ ժամանակ ապահովեց Սասունի անվտանգությունը։ Նրա մահից հետո գլուխ են բարձրացնում ջախջախված թշնամիների հետնորդները, որոնք Սասունը կրկին ստրկացնելու սպառնալիքով խոր անհանգստություն են պատճառում արդեն ծերացած ու միայնակ Հովանին։ «Զենով Հովնան ելավ թուխտ ճամբրենց դաս Մհեր, Լսաց. Մհեր Կողբադինը ազգական տղեք ելած են, կտրճացած, եկած Սասմա քաղաքի դավեն կենեն, իս չըմ կերի, իմ կվաթ չի հաղթե, կըլնիս, կը կաս, խասնիս» (Ա. 229)։ Այս նույն նամակում պատկերելով նրանց վարքագիծը Հովանն ավելացնում է, թե Կողբադինի թոռները «չորս են, չորսն էլ նման կտան դալան» (Ա. 230)։

Վտարանդի Մհերին խորապես վշտացնում է Հայրենի տան ու ժողովրդի անաղատ վիճակը։ «Ելավ, բարի իտու, Սասմա քաղաք եկավ, որ եկավ Սասմա քաղքին մոխասցավ, Լյաց, տժարացավ...—Ա. 229)։ Բայց այդ լացն ու վիշտը չի իշխում նրան — իբրև հզոր բնավորություն և իր միտքն գիտակցող հերոս նա անձնատուր չի լինում վշտին, չի ընկճվում. ընդհակառակն, այն վերածում է վրեժի և առելության ընդդեմ թշնամիների։ Այլ կերպ ասած, այդ վիշտը ավելի է կրկնապատկում նրա ուժը և ավելի վճռական ու շեշտակի դարձնում գործողությունները։ Եվ մենք տեսնում ենք, որ նա կարճ ժամանակից հետո ծունկի է բերում Սասնա ժողովրդի նոր թշնամիներին և շղթայակապ հանձնում Հովանին (ժողովրդին), նրանց հետ հասարակական դատաստան տեսնելու համար։ «Մհերն էլ խլիսուն եկավ, զուր ձին խնծավ, բշեց, կինաց Լոռա դաշտ, տեսավ Կուզբադինը երկու տղեն եկավ... ելավ ղերկու տղեն էլ բոնից, կապեց առեց իպի խրոխալոր կուշտ» (Ա. 231)։ Սասունցիների անվտանգությունը մեկ ընդմիշտ ապահովելու նպատակով, նա, իր բառասուն ընկերներով ոչնչացնում է Կողբադինի մյուս երկու թոռներին, որոնք Հովանի վկայությամբ «Քանց ես երկուս շատ գաղան ին» (Ա. 231) և բոլոր զավթիչներին, որոնց վիպասանները «էնոնց աղգ» անունն են տալիս։ «Ելավ առից

ուր թառսուն ախպեր... Եկան դացին Մաքա-Մադին, «էնտեղ ըռնեցին երկու ախպեր Կուզբադինը թոռներ, էնունց ազգ կտրեցին, զոռեցին էնդեղ, անուն արին Մաքա-Մադին» (Ա. 239)։ Բերած օրինակները ցույց են տալիս, այսպիսով, որ Մհերը Դավթից հետո հերոսաբար պաշտպանում է Սասնա ժողովրդի անկախությունը, դրսևորելով իրեն իրրև ջերմ և անձնուրաց հայրենասեր։

Ինչպես իր նախորդների, այնպես էլ Մհերի հայրենասիրությունը նեղ, էգոիստական հայրենասիրություն չէ։ Նա չի առաջնորդվում «Սասունից քացի ամեն ինչ կործանվի» սկզբունքով, ընդհակառակը, ժխտում է այդ սկզբունքը և ցանկանում օտար զավթիչներից ազատ տեսնել ամենքից առաջ հարևան և հեռավոր ժողովուրդներին։ Հայ ժողովրդի ազատագրությունը չի ուրախացնում նրան ստրկացված հարևան ժողովուրդների կողքին։ Ահա թե ինչու թողնում է Սասնա թշնամիների հետապնդումը և Բաղդատի թագավորի ու ժողովրդի խնդրանքով կռվի դուրս գալիս Կուպ դեի դեմ, սպանում է նրան և Բաղդատն ազատագրում ստրկությունից։

Մհեր ելավ ուրբաթ օր ուր թառասուն դև ուից
Կինաց հետիվ Կուպ դեուն.
...Դև վի կանգնավ.
Երիք սհաթ կռվտան իրարու խիտ,
Էզար, զկուպ դիվու գլոխ կտրից։
Ուից զկուպ դիվու գլոխ, իպի
Իտու Բաղդատու թագավորին, էսաց
Քու դուշման սպանեցը,
Արևային թագավորութին արա։
Ա. 238.

Նույն հայրենասիրության բարձր գիտակցությամբ է մարտնչում նաև մարդակեր պառավի դեմ Հալերում (Ա. 236), օտար հարկահանների դեմ վիսպական Բուրջա քաղաքում (Ա. 780) և այլուր։ Այս փաստերի մեջ արտացոլվում է նրա գործունեության համաժողովրդական բնույթը, նրա լայն ժողովրդասիրությունը։ Դրանցով նա իր նախորդների նման դուրս է գալիս ազգային սահմաններից և դառնում հավասարապես սիրելի նաև հարևան ազատասեր ժողովուրդների համար։ Այսպիսով նա շարունակում է արտաքին զավթիչների դեմ մղած հերոսական կռվի տրադիցիաները և վեպի նախորդ ճյուղերի գաղափարական ուղեգիծը։

Սրանից չի հետևում, իհարկե, թե նա անում է այն և այնպես, ինչ և ինչպես արել են նախորդները։ Ինչպես սխալ է նույնացնել վեպի չորս ճյուղերը, այնպես էլ այդ ճյուղերի գլխավոր կերպարներին ու նրանց արարքները։ Արտաքին զավթիչների դեմ մղած իր կռիվներով Մհերը չի կրկնում ոչ Սանասարին, ոչ Մեծ Մհերին և ոչ էլ առանձնապես Դավթին, որովհետև, ինչպես արդեն նկատել ենք, Մհերի ապրած ժամանակաշրջանը հիմնականում ոչ Սանասարի և ոչ էլ Մեծ Մհերի ու Դավթի ապրած ժամանակաշրջանն է։ Ճիշտ է, նրա օրոք չի վերացել արտաքին վտանգը, այն դեռևս շարունակվում է, սակայն ոչ այն ծավալով ու թափով, ինչ ծավալով ու թափով արտահայտվում էր Դավթի օրոք։ Էպոսի չորրորդ ճյուղում արտաքին վտանգն այլևս առաջնակարգ տեղ չի գրավում։ Այն այլևս չի ստեղծում հասարակական այնպիսի ճգնաժամ, որն

անխուսափելիորեն հանգեցներ ժողովրդական մասսաների ընդվզմանը, պոռթկմանը։ Սրա հետևանքով էլ արտաքին թշնամու դեմ Մհերի մղած կռիվը, ի տարբերություն Դավթի մղած կռվի, թույլ է և էպիզոդիկ, ճիշտ այնպես, ինչպես թույլ և էպիզոդիկ են ներքին հարստահարիչների դեմ Դավթի ունեցած էլույթները։ Մինչդեռ Դավիթը կռվում է հզորագույն թշնամիներ Բար Ֆրեդկի, Շրգան Խորասանի, Աջմու Շապուհի, Մսրա Մելիքի և սրանց անհամար զորքի դեմ, փոքր Մհերը կռվում է միայն Կողբադինի չորս թոռների դեմ։ Եվ ապա, սրանց դեմ, Մհերը, որ բնական է, ի տարբերություն Դավթի, կռվում է ոչ թե ուժերի գերազույն լարումով, այլ ի միջի այլոց, ներքին հարստահարիչների դեմ մղած գլխավոր կռվից ստիպողական շեղում կատարելով։ Այսպիսով, եթե Դավթի համար գլխավոր վտանգը արտաքին թշնամին էր, ապա Մհերի համար այն դառնում է ներքին հարստահարիչը։ Հենց այս էլ պայմանավորում է արտաքին զավթիչների դեմ նրանց մղած կռվի տարբեր բնույթը և դառնում նրանց կերպարների բնութագրման հիմքը։ Եվ իրոք, եթե Դավիթը իբրև կերպար, իբրև ընդհանուրի կրող կազմավորվում է օտար զավթիչների դեմ մղած կռիվներում, ապա Մհերը ներքին հարստահարիչների և «չար աշխարհի» դեմ մղած հերոսամարտերում։

«Ներքին հարստահարիչների դեմ հայ ժողովրդի մղած սոցիալ-դասակարգային պայքարի արտացոլումը էպոսում»[1] գլխում մանրամասն ցույց է տրված Մհերի կերպարի կազմավորման պրոցեսը։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել միայն, որ սոցիալ-դասակարգային այդ դարավոր պայքարում ցուցաբերած իր հետևողականությամբ, համառությամբ, անընկճելի կամքով ու ցասմամբ Մհերը ներկայացնում է հայ աշխատավորությանը։ Նա իր ստեղծող ժողովրդի նման հավատով է նայում ապագային, և պարտությունից հետո էլ խորապես համոզված է, որ վերջ ի վերջո հաղթանակելու է ինքը և ոչ թե իրեն քարայր գցող «չար աշխարհը»։ Սրանով է բացատրվում այն ծանրակշիռ փաստը, որ նա, նույնիսկ քարայրում կազմ ու պատրաստ սպասում է «չար աշխարհի» վրա վերջնական դրոհի օրվան, որպեսզի դուրս գա, հիմնահատակ կործանի այն և ազատություն բերի դարերով կեղեքված ժողովրդին։ Այսպիսով Մհերը իր հերոսական գործողություններով արտացոլում է ինչպես ֆեոդալական շահագործական հասարակության կարևոր առանձնահատկություններից մեկը՝ ֆեոդալների դեմ աշխատավոր գյուղացիության մղած տևական ու համառ պայքարը, այնպես էլ ժողովրդի հավատը վերջնական հաղթանակի և լավագույն ապագայի նկատմամբ։

Էպոսին անդրադարձողների մեծագույն մասը դերազանցապես նախահոկտեմբերյան շրջանում, գրեթե միշտ լռությամբ է անցել Մհերի ռեալիստական կերպարի հիշյալ բովանդակության կողքով։ Լավագույն դեպքում սխալ է մեկնաբանվել թե՛ քարայրում փակվելու փաստը և թե այնտեղից դուրս գալու ձգտման սոցիալ-դասակարգային իմաստը։

Ըստ Լեոի, օրինակ, Մհերը փակվել է քարայրում, որովհետև «տեղ չունի մարդկային հասարակության մեջ» և «ժողովրդի սիրած դաղափարներից ոչ մեկի արտադրությունը չէ»։ Կտրելով ժողովրդից և անհիմն կերպով հակադրելով ժողովրդին, Լեոն իր ուսումնասիրության մեջ Մհերին ի վերջո հռչակում է «չորս կողմը ոտնահարող, ճմլող դժոխային զորություն», «անհարկավոր ու

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1951, էջ 29—49։

ավերիչ ուժ», «բռնություն ու չարություն»։ «Նրա ներքինը, նրա ամբողջ ահավոր կարողությունը տրված է նրան չարության, միայն չարության համար»[1]։

Լեռից մեկ տարի առաջ՝ 1890 թ. էպոսին նվիրված իր «Ազգային վեպ» աշխատության մեջ անդրադառնալով Մհերի կերպարին Մ. Աբեղյանը գրում է. «Մհերի չար և ավերիչ բնության արտահայտությունն է նրա ձեռքի մեջ ծնած մի կաթ արյունը, ինչպես և միևնույն ավանդությունը, որ Լանկթեմուրի համար ես ասվում է, մեկնում է և Լանկթեմուրի ամբողջ կյանքը։ Լանկթեմուր և Մհեր, մեկը պատմական անձնավորություն, մյուսն առասպելական դյուցազն, բայց որքան նմանություն նրանց երկուսի ձեռքի մեջ ծնած մի կաթիլ արյան մեջ և նրանց ավերիչ կյանքի մեջ»[2]։ Ըստ Աբեղյանի, այսպիսով, Մհերը արյունառուշտ Լենկթեմուրն է։ Աբեղյանը Մհերին տված այս գնահատականը փորր ինչ խմբագրված կրկնում է 1899 թ. հրատարակած իր «Հայ ժողովրդական առասպելները...» աշխատության մեջ, ավելացնելով այստեղ մի նոր գիծ Մհերի բնավորության երկվությունը։ «Մհերի առասպելը,—գրում է նա,—ավելի ևս նման է Արտավազդի առասպելին։ Նրա բնավորության մեջ ևս նույն երկվությունն երևում է։ Բայց նա ավելի չար է, քան բարի։ Նորա դերբնական ծննդյան մասին մեզ ոչինչ հայտնի չէ, բայց նա հասարակ հերոս չէ, մեր արդի վեպի ամենաղորեղ դյուցազն է, բնավորությամբ դիվական, քանի որ ընկերություն է անում գևերի հետ»[3]։ Այս տեսակետը հետագայում կրկնել են էպոսին անդրադարձող մի քանի ֆոլկլորիստներ և հայագետներ։ 1929 թ. Վիեննայում հրատարակած իր «Միհրը հայոց մեջ» աշխատությունում Ռ. Ավդալբեկյանը, խոսելով Մհերի աստվածամարտության մասին, նշում է, որ «Այստեղ էլ դիվացումը հասնում է իր գագաթնակետին և հոր արև Մհեր-Միհրը... դառնում է խավարի մարմնացում, մի աստվածամարտ դարդաղ...»[4]։ Զարգացնելով այս տեսակետը, որը բխում է Մհերի վիպական կերպարի (Մհեր-ժողովուրդ) անտեսումից և Միհրի անվան փոփոխակների ֆորմալ համադրումից (Միթրա, Միհր, Մհեր, Մեր, Ներ, Նեռ, Նեռն), Ռ. Ավդալբեկյանը հանգում է այն եզրակացության, թե Միհրը հիշյալ «օդակներով անցնելով... դառնում է Ներ»[5], իսկ սա էլ ի վերջո Նեռ։ «Հին աստվածները նսեմանում են, Միհրը նեռանում է։ Այժմ, քանի որ Միհրը նեռ է, ուրեմն պետք է նեռ լինի ու է նաև Մհերը, իբրև «Միթրայի հայ փոփոխակ»։

Ճիշտ են արդյոք այդ կնահատականները, և առհասարակ հնարավոր է, որ ժողովուրդը չար ու դիվական ներկայացնի իր ամենասիրելի հերոսներից մեկին, հերոս, որի մեջ մարմնավորում է իրեն պատմական զարգացման որոշակի էպոխայում։ Համաշխարհային էպիկական գլխավոր դրական կերպարների, այդ թվում նաև մեր էպոսի դրական գլխավոր կերպարների էության մեկնաբանություններ բացասարար է բատասխանում առաջադիր հարցին։ Ժողովուրդը չի կարող չար ու դիվական ներկայացնել իր հերոսին, այն պարզ պատճառով, որ ինքը չար ու դիվական չի եղել իր զարգացման և ոչ մի էտապում։ Ինչի վրա են հենվում ասվա Մհերին չար ու դիվական համարողները։

[1] Լեո Դավիթ և Մհեր, քննադատություն, Մոսկվա, 1891, էջ 31—38։
[2] Մ. Աբեղյան, Ազգային վեպ, «Մուրճ», Թիֆլիս, 1890, փետրվար, № 2, էջ 228։
[3] ՝՝՝ Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899, էջ 76։
[4] Ռ. Ավդալբեկյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929, էջ 121։
Նույն տեղում, էջ 144։
[6] Նույն տեղում, էջ 156։

նրանք Մհերին համարելով կրոնաառասպելական կերպար հենվում են ինչպես այդ կերպարի կրած փոփոխությունների վրա, ըստ որի սկզբնապես քարի աստվածը հետագայում դիվացել է ու դարձել չար[1], այնպես էլ հատկապես Էպոսում եղած Մհերի կարծեցյալ չարությունը դրսևորող տվյալների վրա։

Մհերի կերպարի միֆական մի քանի գծերի մասին խոսելիս արդեն նկատեցինք, որ նա Էպոսում մնացել է ոչ իբրև ժողովրդի վաղնջական քարացած պատկերացումների բեկոր, այլ իբրև նրա լավագույն իդեալների մարմնացում։ Այս նշանակում է, որ Մհեր կամ Միհր աստծու հետագա դիվացումը բացարձակապես ոչ մի կապ չունի Մհեր-ժողովրդի հետ։ Այս պարզ է, և առանձին մեկնաբանության կարիք չի զգացվում։ Իսկ ինչ վերաբերում է Մհերի կարծեցյալ չարությունը դրսևորող փաստերին, ապա պետք է ասել, որ դրանք մեկնաբանվել են ոչ ըստ էության, այլ ձևականորեն ու սխալ։ Այդ ցույց տալու համար ամենից առաջ տեսնենք փաստերը։

1. Փաստերի մի խումբը վերաբերում է Մհերի ծննդի հետ կապված հանգամանքներին։ Ըստ պատումների մի մասի Մհերը ծնվում է Դավթի Սասունում գտնվելու ժամանակ։ Տղայի ծննդյան ուրախալի լուրը լսելուց հետո նա շտապում է տուն և ցանկանում է իմանալ նորածինը իր և նախորդների նման հզոր է թե ոչ։ «Թե որ դդ տղեն ընձնից է, ուր վրեն նշան մի, զորութեն մի տեղնի» (բ. 36)։ Երբ նորածինը «ընդի» փոխարեն փաթաթած գուրանի շղթաները կըտրատում է, հայտնում են Դավթին, «թե տղեն լավ տղա է, ընջիլ կտրեց, ըմա ուր մեկ ձեռք խփուկ է ու մարդ չիկոնա բանա ձեռք» (բ. 39)։ Դավիթը բացում է տղայի ձեռքը և ափի մեջ տեսնում «զուլանթ մի արուն»։ Այդ անսովոր ու բացառիկ նշանի առկայությունը նա մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «Ասեց.— Հա՛յ, հա՛յ... զաշխարք արեր է կաթ մի արուն, դրեր է ուր ձեռվա մեջ։ Ի՛ որ ըդի մնաց, ըդուր մոտեն զարմանալի բան տեղնի» (բ. 39)։

2. Փաստերի մյուս խումբը վերաբերում է Մհերի մանկական չարություններին։ Մեկ տարին բոլորելուց հետո նա խաղում է քաղաքի երեխաների հետ և մեծ վնաս պատճառում նրանց։ Խաղի ընթացքում երեխաների մի մասը խեղվում է, իսկ մյուս մասը սպանվում։ Լսելով երեխաների ծնողների բողոքը Դավիթն արգելում է Մհերին խաղալ։ Բողնելով այդ, Մհերը զբաղվում է մի այլ խաղով՝ կամրջաշինությամբ։ «Սասմա քաղաքի» առջևից անցնող գետի վրա կամուրջ է կառուցում։ Եվ երբ մարդիկ գետն անցնում են կամրջով՝ ծեծում է ու ստիպում, որ անցնեն ջրի միջով։ «Շան որդիկ ես կարմունջ կապիր եմ, ծի խամար իմ կապի, ինչո՞ւ վար իմ կարմնջին ինի կերթեք» (Ա. 42)։ Իսկ երբ անցնում են ջրի միջով, ծեծում և ստիպում է, որ անցնեն կամրջի վրայով։ «Շան որդիկ իս կարմունջ կապիր եմ, ծի խամար իմ կապի, տուք ինչո՞ւ կը սեք ջրուն, ճուր ղձե տանի, մեղը ընկի իմ վիզ» (Ա. 42)։

3. Երրորդ փաստը հոր և որդու հանրահայտ կռիվն է։ Այդ կռվի պատճառը մերթ վերոհիշյալ «չարությունների» համար հորից ստացած ապտակն է, մերթ խանդության եղբայրների սպանությունը, մերթ հեռավոր երկրներից վերադարձող Դավթի հետ եղած դեղեցիկ աղջիկը, որին, հորը չճանաչելու պատճառով, ցանկանում է ուժով իլել Մհերը, և մերթ էլ տղայի հետ իր ուժը փոր-

[1] Թ. Ավդալբեկյանը իր «Միհրը հայոց մեջ» աշխատությունում գրում է. «Մհերի մեջ դիվական գծերը հետո են ավելացած։ Սակայն և այնպես փաստ է, որ սրանք կան գրույցի մեջ և սրանք են, որ երկվություն են տվել դյուցազնի բնավորության մեջ», էջ 119։

ձելու Դավթի ցանկությունը։ Հոր և որդու կռիվը կատաղի բնույթ է ստանում մեծ մասամբ այն դեպքերում, երբ նրանք կռվում են ոչ իբրև հայր ու որդի, այլ իբրև անծանոթ հերոսներ, իբրև իրար չճանաչող «ախահլեաններ»։

4. Իր թափառումների ընթացքում Մհերը հանդիպում է մի շարք պառավների և պառաված աղջիկների՝ թվով 15—16 հոգի։ Սրանց բոլորին անխտիր սպանում է. չի խնայում անգամ այն պառավներին, որոնք նրան փրկում են մահվան ճիրաններից։

5. Վերջին փաստը վերաբերում է Մհերի ամուսնության հետ կապված հանգամանքներին։ Մհերը ամուսնանում է Գոհար խաթունի հետ։ Իմանալով այդ մասին «Հալաբա թագավորը» անհամար զորքով պաշարում է Գոհարի քաղաքը և ցանկանում է խլել նրան Մհերից։ Մհերը որոշ պատումներում ծրագրյալ, որոշ պատումներում բացահայտ կռվում է թագավորի դեմ։ Սակայն կռիվը երկարում է։ Գոհարն ու Մհերը որոշում են մեկ օրում ավարտել այն։ Դիմում են խորամանկության։ Գոհարը խորհուրդ է տալիս Մհերին հայտնել թագավորին, որ համաձայն է պսակվել նրա հետ, եթե թագավորը և ժողովուրդը զան իրեն դիմավորեն։ Թագավորն ուրախացած, որ արդեն Գոհարը համաձայնվել է իր կինը դառնալ, ժողովրդի հետ գնում է նրան ընդառաջ։ Այդ ժամանակ Գոհարն ու Մհերը տարբեր կողմերից հարձակվում, կոտորում են զորքը, սպանում են թագավորին և վերջնականապես ազատվում հետապնդումներից։

Սրանք են բոլոր այն փաստերը, որոնց հիման վրա Մհերը համարվել է չար ու դիվական։

Վերը բերված փաստերի առաջին խմբում ընդգծվում է Մհերի կարծեցյալ չարությունը դրսևորող երկու հանգամանք՝ նորածին Մհերի արտակարգ հզոր ուժը և ձեռքում սեղմած մի կաթ արյունը։ Անդրադառնալով առաջին հանգամանքին պետք է նշենք, որ ուժի նման հիպերբոլիկ նկարագրություն տեսնում ենք նաև մեր մյուս հերոսների և առանձնապես Դավթի մոտ, որի չարության մասին հեռավոր ակնարկ անգամ չի արվել վեպն հեսազոտողներից և ոչ մեկի կողմից։ Ընդհակառակն, նրա թե մանկական և թե հետագա տարիների անսահման հզոր ուժը միշտ էլ համարվել է բարի, որովհետև նրա մեջ տեսել են իր ազատագրության համար պայքարող ժողովրդի ուժի խտացումը։ Նույնն է նաև նորածին Մհերի ուժը։ Բնդի փոխարեն փաթաթած շղթաները կտրելու էպիզոդով վիպասաններն այստեղ ևս ազդարարում են ոչ թե. Լեոի խոսքերով ասած. նրա «մթին, դժոխային զորության» մասին, այլ այն մասին, որ նա «Սասնա ջոչ» տնից է, Սանասարի, Մեծ Մհերի ու Դավթի հզոր հետնորդը, այն լուսավոր և բարի ուժը, որը ազատություն ու խաղաղություն է բերելու իր ժողովրդին։ Այլ նշաններ ցույց տվող մանուկը անընդունակ է իրագործելու հիշյալ միտքը։ Ահա թե ինչու մի քանի պատումներում Դավիթը տխրում է, երբ իմանում է, որ նորածին Մհերը չի հիշեցնում իր մանկությունը։ «Քառասունք գեռ չէր լմնդե, Տավիթ մտավ օդեն տեսավ, Մհեր քներ ի, ամա նաֆաս խոնած ժամանակին իրիսի վերևի շոր չելնի, իջնի։ Շաֆայի ոնաց, թե տղեն ուր մեջքի պտուդ չի։ Խանգութ խանըմին ասաց.— իմ տղեկութենի ժամանակ, երբ որ ես նաֆաս կառնի կուտի իմ երեսի շոր չում օդի կամար կելներ, կիջներ» (Ա. 1078)։ Եվ ընդհակառակն, նա անսահման ուրախանում է, երբ քառասուն օրից հետո տեսնում է, որ նորածինը իր նման հզոր է, իր «զարմից» է, իր «շնորքն» ունի և ուրեմն ընդունակ է նախորդների նման հավատարմությամբ

ծառայելու ժողովրդին։ «Տավիթ մտավ օդեն տեսավ, որ տղի երեսի շուրի հետ սրորոցի ծածկոցն էլ չում կամար կելնի նաֆաս առած, տված ժամանակ։ Խանգութ խանում ներս որ մտավ Տավիթն ասաց.—ընյած օր ես քո մեղքն առի, բայց մկա կտեսնամ որ տղեն մեր զարմիցն է, մեր շնորքն ունի» (Ա. 1079)։ Այսպիսի դատողություններ գտնում ենք էպոսի գրեթե մյուս բոլոր պատումներում։ Դրանք բոլորը պարզ ու որոշակի ցույց են տալիս, որ Նորածին Մհերը իր ուժի հիպերբոլիկ դրսևորումով կապվում է ոչ թե շարի, այլ իր հզոր նախորդների և հոր հետ, որոնք իրենց ողջ կյանքը նվիրաբերեցին ժողովրդին։ Իսկ այս նշանակում է, որ նա հետագայում ժողովրդին ծառայելու է այնպիսի անձնուրացությամբ, ինչպիսի անձնուրացությամբ ծառայեցին Սանասարն ու Բաղդասարը, մեծ Մհերն ու Դավիթը։

Այդ երևում է նաև նրա ձևորում սեղմած մի կաթիլ սարյան ալեգորիկ պատկերից, պատկեր, որով ժողովուրդն արտահայտել է այն միտքը, որ նա հետագայում կործանելու է ոչ թե աշխարհն ընդհանրապես («նա պիտի ելնե և կոտորում անելով աշխարհն ավիրե»)[1], այլ աշխատավորներին ստրկացնող շահագործական կարգը, որին ժողովուրդը «շար աշխարհ» անունն է տվել։ Եվ եթե վեպում նրան ուղղակի կամ անուղղակի կերպով արյունռուշտ են կոչել, ապա գիտակցորեն ընդգծել են այդ աշխարհի նկատմամբ Մհեր-ժողովրդի ցուցաբերած ժխտական վերաբերմունքը միայն։ Պատումներից մեկում, օրինակ, Դավիթը տեսնելով «տղայի ափունց մեջ... գոլ կայնուկ» արյունը ուրախացած բացականչում է թե, «իդա տղեն յոթ ղսթ վըր ընձի արնախում ա» (Բ. 319)։ Դավիթն այստեղ իրեն համարում է «արնախում» ոչ, իհարկե, այն պատճառով, որ սպանել է բոլորին, ինչպես ասում են «թաց ու չոր» չհարցնելով, այլ այն պատճառով միայն, որ դաժան դատաստան է տեսել ժողովրդի թշնամիների հետ։ «Արնախում» բառն ուրեմն նրա հասկացողությամբ նշանակում է ատել թշնամուն, նրա նկատմամբ լինել անողիջում ու դաժան։ Այժմ, եթե տղան իրենից յոթ անգամ «արնախում» է, ապա նշանակում է, որ նա ժողովրդի ոսոխների նկատմամբ լինելու է յոթ անգամ ավելի անողիջում ու դաժան։ Մհերի հետագա գործողությունները ամբողջությամբ հաստատում են նրան տված այդ նախնական ճիշտ բնութագիրը։ Իր ահավոր ուժով և բռում սեղմած արյունով, Մհերն այսպիսով, կապվում է ոչ թե նեռի կամ արյունռուշտ Լենկթեմուրի, այլ ժողովրդին նվիրված իր նախորդների հետ և երևան բերում հետագայում ժողովրդի թշնամիներին դաժանորեն պատժելու արտակարգ «շնորք»։

Ըստ էության նույն գաղափարն է դրսևորված նաև վերոհիշյալ երկրորդ խմբի փաստերում՝ երեխաների ու քեռիների հետ խաղի և կամրջաշինության էպիզոդներում։

Երեխաների հետ Մհերի խաղի էպիզոդը էպոսի գրեթե բոլոր վարիանտներում նույնությամբ պատմված է Դավթի վերաբերյալ, բայց ոչ որ, այդ թվում և Լեոն, փորձ չի արել նրա այդ արարքը շարության գիծ համարելու։ Ոչ մի հիմք չկա այն շարության գիծ համարելու նաև Մհերի համար, որովհետև նրա խաղը նման է Դավթի խաղին թե՛ ձևով ու բովանդակությամբ, և թե՛ առանձնապես որոշակի ընդգծված նպատակասլացությամբ։ Մանուկ Դավիթը իր խաղով, ինչպես արդեն ցույց է տրված «Դավթի կերպարը» գլխում, սպանում է

[1] Թ. Ավդալբեկյան. *Միհրը հայոց մեջ*, Վիեննա, 1929, էջ 119։

Մորա մեծամեծների երեխաներին Մսրում, իսկ Մհերը պապի (մոր գծով) Երկրի երեխաներին Կաղզվանում կամ Կապուտկողում, նայած թե որտեղացի է պապը։ Իրենց այդ արարքներով հայրն ու որդին բացարձակապես հակադրվում են օտար թշնամական միջավայրին և ժխտում այն։ Պետք է նշել սակայն, որ այդ վերաբերմունքը Մհերի խաղում ավելի որոշակի է, քան Դավթի խաղում, դրան իբրև ապացույց կարող է ծառայել այն փաստն, օրինակ, որ նա պապի տանը մեծամեծների երեխաներին պատուհասելուց բացի նույն խաղով պատուհասում է նաև իր աշխատանքի արդյունքը հափշտակող բեռիներին.

Մհեր երկու ծառ բերեց փակցրեց իրար,
Ասավ.— Քեռիք,
Իրեքդ ես ծառը խեծեք, իրեքդ էլ են.
Ասին.— Հնչի՞։
Ասավ.— Տրնկոզա խաղանք, երթանք.
Ըտոնցը բերեց խաղցրեց.
Ասավ.— Քեռիք հարեք չուր ծեր
Քեռիքն եկան խեծան ծերի վրեն։
Հինքը իջավ ու ծառեքը թողեց.
Խրտ թողելուն՝
Ծառերը իրեքը արևմուտք,
Իրեքն էլ արևելք թալեց,
Ինքը ելավ իր ավը վեկալեց,
Ընկավ ճամբախ, եկավ տուն։
ԲԲ. 161

Ակներև է, որ ինչպես Մսրա մելիքն ու նրան շրջապատողները Դավթի ճյուղում, այնպես էլ Մհերի պապն ու քեռիները Մհերի ճյուղում պատկերված են իբրև Սասունի և Սասնա հերոսների ոխերիմ թշնամիներ։ Այդ է պատճառը, որ Մհերի (ժողովրդի) աշխատանքը կողոպտելուց (Ա. 468—469, 372—373) և Դավթին սպանելու փորձեր կատարելուց բացի (բ. 321) նրանք ոչ մի ջանք չեն խնայում Մհերից թաքցնել նրա իսկական ծագումը, հետագայում նրա միջոցով Սասունը նվաճելու համար։ Նրանց այդ մտադրությունը կանխում է Քեռի Թորոսը Մհերի հետ ունեցած խոսակցությամբ (բ. 328)։ Նա Մհերին բացատրելով Սասունի վրա կախված վտանգի ահավորությունը՝ նրա մեջ բորբոքում է սոցիալական վրեժխնդրության կրակը, որն ավարտվում է թշնամանքի գլխավոր կազմակերպիչների անխնա սպանությամբ։ «Մհեր հեծավ իր ձին. Քեռու իետ եկավ Կաղզվան, հառեչ զվաչոն — Մարջոն բռնեց, զարդեց, մորթեց» (բ. 329)։ Այսպիսով, Մհերի մասին պատմված մանկական խաղը թշնամական միջավայրի նկատմամբ նրա ցուցաբերած ժխտական վերաբերմունքի արտահայտությունն է և ոչ թե նրա կարծեցյալ չարության արտահայտությունը։

Նույնպիսի մի նպատակասլաց խաղ է նաև կամրջաշինությունը, որը սկզբնապես ունեցել է պապի երկրի երեխաներին և իր քեռիներին պատուհասող խաղերի իմաստը։ Այստեղ մեզ չպետք է շփոթեցնի այն հանգամանքը, որ կամրջաշինությունը, հակառակ մյուս խաղերի, տեղի է ունենում Սասունում և ոչ թե Սասունից դուրս՝ թշնամական այն միջավայրում, որտեղ, ըստ պատումների մեծագույն մասի, իր մանկությունն է անցկացնում Մհերը։ Եթե մի քանի պատումներում հիշատակվեր այդ մասին, ապա նրան վերագրված «չարու-

թյունը» անհերքելիորեն կստանար այն իմաստը, ինչ իմաստ որ ունեն իրենց շրջապատող մեծամեծների երեխաների հետ Դավթի և Մհերի խաղերն ու նրանց «արնախումությունը»։ Այդպիսի դեպքում էպիզոդը թերևս տեղիք չտար սխալ մեկնաբանության։ Սակայն նման ցանկալի հիշատակություն չկա կամրջաշինության խաղը պատկերող երկու պատումներից և ոչ մեկում։ Ինչով բացատրել այդ։ Այդ պետք է բացատրել նրանով, որ օտար միջավայրի անունը, որտեղ սկզբնապես տեղի է ունեցել խաղը, մոռացվել է կամ ուղղակի դուրս է թողնվել էպիզոդից, ճիշտ այնպես ինչպես դուրս է թողնվել կամրջաշինության ամբողջ էպիզոդը Մհերին վերաբերվող մնացած մյուս բոլոր պատումներից։ Իսկ սրա պատճառը ոչ թե այն է, որ էպոսի բոլոր ասացողների անհայտ է եղել կամրջաշինության էպիզոդը, այլ այն, որ նրանք այդ համարել են աղավաղված էպիզոդ, Մհերի հերոսական կերպարին հակասող պատմություն։ Այժմ, քանի որ այն աղավաղված է, քանի որ շփոթվել ու մոռացվել են նրա կարևոր մանրամասները, ապա բնական է, որ պետք է շփոթվեր ու մոռացվեր նաև նրա նախկին տեղը, ինչպես այդ մասամբ տեղի է ունեցել Դավթի և Մհերի մանկական մյուս խաղերի հետ։ Մասամբ ենք ասում, որովհետև վերջիններս օտար միջավայրից բացի տեղի են ունենում նաև Սասունում։ Այս բոլորն, անուղղակի կերպով ցույց են տալիս, այսպիսով, որ Մհերի կամրջաշինության խաղը իր և հոր մյուս խաղերի նման ուղղված է Սասունի թշնամիների դեմ, և որ նա դրանով դեռևս պատանի հասակից հետապնդում է ոչ թե «դժոխային նպատակ»[1], այլ Սասունը կեղեքիչներից աղատ պահելու վեհ ու ազնիվ նպատակ։

Սխալ է մեկնաբանվել նաև Մհերի ու Դավթի կռվի միջադեպը։ Մհերին չար համարողները այստեղ ևս առաջնորդվել են երևույթի լոկ արտաքին ու ձևական հատկանիշներով։ Հիշյալ կռիվը վերապատմելու ընթացքում Լևոն, օրինակ, առանձնապես ընդգծում է, թե «բարձրանում է անհնազանդությունը, բոի ուժ առաջ բերում, ընդդիմանում է հարազատ հորը, կռվում է նրա հետ... Դավիթը հայր է, ունի դուք, բարի է, նա պատրաստ է չզարնել, հետ դառնալ «մինչդեռ» չար որդին ոչ ոքի չի լսում և մարտնչում է կատաղաբար»[2]։ Չխորանալով միջադեպի և հորն ու որդուն բնութագրող ճյուղերի բովանդակության մեջ, միջադեպը կտրելով ճյուղում արտահայտված ընդհանուր դաղափարից, Լևոն, այսպիսով, Մհերին համարում է «անհնազանդ բոի ու չար», այսինքն տալիս է այնպիսի բնութագիր, որը, ինչպես կտեսնենք ստորև, հեռու է թե կռվի բուն իմաստից և թե Մհերի կերպարից։

Դավթի և Մհերի կռվի միջադեպը առկա է Մհերին վերաբերվող գրեթե բոլոր պատումներում, որը նշանակում է, անշուշտ, որ այն ոչ թե պատահական էպիզոդ է, այլ հանդիսանում է ճյուղի սյուժետային դծի զարդացման կարևոր օղակներից մեկը։ Հոր և որդու կռիվը, ինչպես արդեն նկատել ենք, տեղի է ունենում մերթ կամրջաշինության ու երեխաներին պատուհասող խաղի արդելման պատճառով (գ. 194 Ա. 42,100 և այլն), մերթ «Գյուղջստանից» կամ Ադրբեջանից Դավթի բերած աղջկա պատճառով (Ա. 223, 295, 271, 646 և այլն), մերթ խանդության եղբայրների սպանության (Ա. 469, 927, 1080, բբ. 300 և այլն), մերթ էլ իրենց ուժերը փորձելու պատճառով (Ա. 528, 597)։

[1] Լևոն, Դավիթ և Մհեր, Մոսկվա, 1891, էջ 32։
[2] Նույն տեղում։

Կովի նշված պատճառների քննությունը ցույց է տալիս, որ Մհերը երբեք չար դիտավորությամբ չի կռվում հոր հետ և նախանձով ու ատելությամբ չի լցված նրա նկատմամբ։ Դրան իբրև ապացույց կարող է ծառայել նախ այն փաստը, որ կռվի տասնչորս դեպքից հինգի ընթացքում նա չի ճանաչում հորը, ինչպես և հայրը տղային և նրանք կռվում են իբրև բացարձակ անծանոթներ։ Այնուհետև երեք գոտեմարտեր տեղի են ունենում Դավթի ցանկությամբ, որ նշանակում է թե նրա պարտության ու կրած ֆիզիկական ցավի համար մեղավորը Դավիթն է և ոչ թե Մհերը։ Իսկ եթե նկատի ունենանք, որ երեխաների հետ խաղի, կամրջաշինության և քեռիների սպանության պատճառով առաջացած կռվի մնացած յոթ դեպքից մեկի ժամանակ Դավիթը չկռվելով տղայի հետ լոելյան իր համակրանքն է հայտնում նրա արարքի նկատմամբ, և որ մի քանի դեպքերում էլ Մհերը չնայած ստացած ծանր ապտակներին ձեռք չի բարձրացնում հոր վրա (Ա. 374), այլ ընդհակառակն, մեղանչում է նրա առաջ («իմ խեր տուն ես, ես քի մեղա» Ա. 224), ապա պարզ կդառնա, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե «անհնազանդ ու չար որդու», այլ ծնողի պատիվը պահող, նրան հնազանդվող ու սիրող տղայի հետ։ Այս տեսակետից բնավ պատահական չէ, որ նա կռիվներից ոչ մեկում չի սպանում հորը, չնայած գրեթե միշտ հաղթում է նրան։ Ընդհակառակն, գոտեմարտից որոշ ժամանակ անց դաժան դատաստան է տեսնում հորն սպանող Զմշկիկ Սուլթանի հետ, իսկ մինչ այդ հոգեկան խոր տվայտանք ապրում և երեսնիվայր ընկած երեք օր այնպես լալիս, որ լացից հեղեղատ է առաջանում։

Լաց ու վըր քիթ ու բերնին ընկավ Գուռ։
Որ ընկավ վըր գետնին
Ընդուր հոդբրդանք թափան վրեն՝
Իմալ երեցին, չկոցան շիտկեցին
Մհերի արտասունք զգետին երեց հանդակ ու գնաց։
Երեք օր, որ թըմավ, Մհեր նոր շիտկավ
Հեծավ պապու քուռակ,
Ու գնաց, ելաթ քար ու քանդ երեց։
Ա. 43

Որքան մեծանում, հասակ է առնում Մհերը, այնքան մեծանում ու խորանում է որդիական սերը։ Իր երկար թափառումների ընթացքում նա միշտ ելևէջտագիտությամբ ու խանդաղատանքով է հիշում ծնողներին և միայն նրանցից օգնություն խնդրում։ Նրա համար աշխարհում ամենաթանկագինն ու ամենաքաղցրը ծնողներն են։

Խերիկ, վի՛ր իլի, խերիկ վի՛ր ելի,
Քու անուշ խոդուն փափուկ մնացը,
Քու անուշ խոսքերուդ կարոտ մնացը,
Ենքան մենակ աշխար կացի։

Մերիկ, վի՛ր ելի, մերիկ վիր ելի,
Իս իմ քու ծծի որտին,
Յոթ ամիս ընձը շախիր իս վար քու սրտին,

Շատ տանջանք իս քաշի վար աստնվորին—
Շատ ման իմ եկի աշխար, շիվար իմ ման եկի,
Չտեսա քու պես քաղցրիկ մերիկ վար աշխարին։
Ա. 241—242

Նույնպիսի ջերմությամբ էլ ծնողներն են սիրել Մհերին։ Նրանք երբեք երես չեն դարձրել նրանից։ Նույնիսկ գերեզմանում, ըստ ժողովրդական հավատալիքի, ապրում են նրա վիշտը և խորհուրդ տալիս ժամանակավոր ապաստան գտնել Վանա կամ Ակռիու քարի մեջ, մինչև աշխարհը վերաշինվի և գեռինը նրա ձիու «առաջ դայամիշ տա»։

Խեր կասա.
Քու տեղ Ակռիու քարն ա։
Դու անմախ որտի ես,
Դույնեն ավրի, տիր մել շինվի,
Ուր գետին քու ծիու հառջիվ դայամիշ տա,
Դույնեն քուն։
Ա. 932

Կարելի է շարունակել փաստերը, էպոսն այդ հնարավորությունը տալիս է, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ կռվի միջադեպը երբեք չի աղդել հոր և որդու միմյանց նկատմամբ տածած ջերմ սիրո վրա։ Հանդիսանալով քմահաճ վերաբերմունքի կամ նեղ, անձնական շահերի բախման արդյունք, այն ոչ մի պատումում կռվողներից մեկին չի ներկայացնում բարի, հնազանդ ու ժողովրդասեր, իսկ մյուսին չար, անհնազանդ ու ժողովրդատյաց։ Նրանք թե իբրև հայր ու որդի և թե իբրև հերոսներ հավասարաչափ սիրված են ժողովրդի կողմից, որովհետև երկուսն էլ նվիրված են նրան և հանդիսանում են նրա իդեալների մարմնացումներն ու իրականացնողները։ Այսպիսով կռվի իմաստը տղային չար, իսկ հորը բարի ներկայացնելու մեջ չէ և ամենևին էլ այդ նպատակով չի պատմված էպիզոդը։

Կռվի էպիզոդն ունի խոր իմաստ և սերտորեն կապված է երրորդ և չորրորդ ճյուղերի դաղափարական բովանդակության հետ։ Այն սկզբնապես հոր և որդու միջև տեղի ունեցող կռիվ չի եղել, այլ եղել է արյունակցական կապով չկապված վիպական հերոսների հին և նոր սերնդի միջև տեղի ունեցող կռիվ, որը համաշխարհային վիպերգության տարածված մոտիվներից մեկն է։ Իբրև վիպերգության ավելի վաղ շրջանին պատկանող մոտիվ, այն նույնությամբ չի ընկալվել նոր ժամանակների բոլոր ասացողների կողմից։ Այդ պատճառով նրանցից շատերը կռվին տվել են այլ մեկնաբանություն և, դրանով իսկ, մթագնել նրա նախնական իմաստը։ Էպիզոդը պատմող տասնչորս ասացողներից միայն մեկի պատումներում է պահպանվել կռվի կծկուր, բայց նախնական ճիշտ բացատրությունը[1]։ Այդ հետևյալն է։ «Զմշկիկ ոտան հորոդկից, ըսաց՝ սրը կռիվ... Քանի մ օր կը մնա, Տավիթ կերթա։ Քանի մ օր կը մնա են մա

[1] Դրանք Ժ և ԺԱ պատումներն են, որ տարբեր ժամանակ ասել է Մոկացի Վարդան Մուխսի-Բաղիկյանը։ Սրա մասին «Մասնա Մսերի Ա հատորում տրված է հետևյալ բնորոշ ծանոթությունը. «Վարդանը հմուտ ասացողի համբավ է ունեցել։ Մեծ ակնածությամբ են խոսում նրա արվեստի մասին։ Ասում են, որ նրա պատումն ամենարնդարձակն էր և պատկանակը» (Ա. 474)։

կովուն։ Վախըտ կընցնը, Տավիթ չիդա։ Մհեր լաճ կիլնը, կերթա հիտիվ։ Դոր Մհեր՝ խասիրը. Տավիթ Մհեր կառնին հիրար, երկուսն էլ զասքար կը կտրին, կը տառնան։ Տավիթ, ուր լաճ քիչ ըմ ենտեղ կը ճարտըվին։ Դորս են Տավիթ կրսը — մա հինմ՛ իմ լանն էլ ձի պես կուվաք ունը։ Կը խասնի՞ն հիրար, լաճ գիտեր լզարկի գետին» (Ա. 521)։ Չորս տարի հետո պատմած նոր վարիանտում ասացող Վարդան Մուխսի Բաղիկյանը այդ էպիզոդը պատկերում է հետևյալ կերպ։ «Դավիթ էսաց Մհերին.—Արը, իս, դու քուշտրակ առնենք, մհա գու էլ իմ տարդ (իմ չափ) կտրիճ իս։ Հատե Մհեր, Դավիթ խասան հիրար։ Մհեր լզԴավիթ վիրուց, եզար գետին» (Ա. 597)։

Բերված օրինակներից պարզ երևում է, որ կռիվը տեղի է ունենում Դավթի ցանկությամբ իր և տղայի ուժի կամ «կտրիճության» չափը որոշելու նպատակով։ Նա ենթադրում է, որ ինքը հզոր է տղայից և դեռ կարող է գործել իրրև չդերազանցված հերոս։ Սակայն իրականությունն ասում է ճիշտ հակառակը։ Նա պարտվում է և պարտությունից անմիջապես հետո պարզ գիտակցում, որ տղան՝ նոր «կտրիճը» հզոր է իրենից, և որ ինքը պարտված է վերջնականապես ու անվերադարձ կերպով։ Այս հաստատվում է գոտեմարտում նրա ստացած մահացու հարվածով («կողաշարի չարդվածքով), կրկին սրխրանքների ասպարեզ վերադառնալու, «փառևանություն» անելու բոլոր հույսերը կորցրած հերոսի դառն անեծքով՝ ուղղված տղային և առանձնապես կռվին հաջորդող դեպքերի հետագա ընթացքով։ Տղայի հետ ունեցած կռվից հետո, նա, ինչպես հայտնի է, դնում է Զմշկիկ Սուլթանի երկիրը և այնտեղ էլ սպանվում։ Նրա կյանքի այսօրինակ վախճանը, որ առկա է էպոսի անխտիր բոլոր պատումներում, ցույց է տալիս, որ նա իր միսիան համարում է ավարտված ու իրրև հին հերոս տեղի տալիս նոր հերոսին։ Սակայն այդ լոկ հայր ու որդու, լոկ հին ու նոր հերոսների հերթափոխություն կա՞ հաջորդականություն չէ։ Խնդիրն այն է, որ նրանցից յուրաքանչյուրը սերտորեն կապված է իրարից տարբեր և իրար հակադիր էպոխաների հետ։ Եթե Դավիթն, օրինակ, հայկական միջնադարի և նույնիսկ հին ու նոր ժամանակների բազմաթիվ գծեր արտացոլելով հանդերձ, իր ծագումով հիմնականում կապվում է նախադասակարգային հասարակության հետ և արտացոլում է նրա զարգացման առանձնապես վերջին էտապը, երբ թալանչիական պատերազմներն ու կռիվը կողոպտիչների դեմ, «դառնում են ժողովրդական կյանքի նորմալ ֆունկցիան» (Էնգելս), ապա Մհերը նախադասակարգային էպոխայի մի շարք գծեր արտացոլելով հանդերձ հիմնականում կապվում է շահագործական հասարակարգի հետ, այդ հասարակարգի կարևոր հատկանիշներից մեկի՝ շահագործողների և շահագործվողների միջև մղվող դասակարգային անդիջում պայքարի միջոցով։ Այսպիսով, ի դեմս Դավթի ու Մհերի մենք գործ ունենք իրար հակադիր, մեկի մահով մյուսի գոյությունը պայմանավորող իրարամերժ էպոխաների հետ։ Իր դարն ապրած հին էպոխան մեռնում է կատաղի և օրհասական կռվով միայն, ինչպես նույն կատաղի ու անդիջում կռվով ծնվում ու հնի բացասումով տիրակալում է նորը։ Դա զարգացման անքակտելի օրենքն է, որ մեր էպոսում դրսևորվել է Դավթի ու Մհերի կռվի ու վերջինիս հաղթանակի ալեգորիայով։ Այդ կռիվն ըստ էության իրար ժխտող էպոխաների միջև տեղի ունեցած կռիվ է։ Մհերի հաղթանակը Դավթի նկատմամբ, դա նորի հաղթանակն է հնի նկատմամբ։ Մհերը զարգացող, անպարտելի նորն է, «աշխարհի բախտը դարձ-

նող» (Գ. Սրվանձտյանց) այն հերոսը, որի հետ ժողովուրդը կապել է իր սոցիալական ազատագրության իդեալը։

Մահերը նորի հետ է կապվում նաև պառավ կանանց նկատմամբ ցուցաբերած ժխտական վերաբերմունքով։ Իր թափառումների ընթացքում, նա, ինչպես նշեցինք վերը, հանդիպում է 6—7 պառավի ու մի քանի տասնյակ պառաված աղջիկների և տարբեր պատճառաբանությամբ սպանում բոլորին։ Պառավների և պառաված աղջիկների կերպարների նման օրինակ առատություն և անխնա դաժան վերաբերմունք տեսնում ենք միայն էպոսի չորրորդ ճյուղում, փոքր Մհերի կողմից։ Ինչով է բացատրվում այդ, ովքեր են այդ պառավները և ինչ են ներկայացնում իրենցից։

Պառավներից մեկը Գոհարի մայրն է։ Մհերը սրան հանդիպում է քարանձավում, հաց թխելիս։ Սարսափելով նրա այլանդակ արտաքինից, թիկունքից «դախտիկ» հարձակվում է վրան և հաղթում։

Գնաց տեսավ՝ մեկ տեղաց մուխ. ում կելնի.
Հերի տակ էր, գնաց են հերի տակ։
Տեսավ մի պառավ նստի խաց կթխի.
Ծծեր թալեր վար թևքերուն.
Ծծեր ինչխ շան լակոտ հիրուն կառնուն։
Մհեր վախնցավ ասաց.
Թը դախտիկ թըլեմ, ենու ծծեր բռնեմ,
«Տելնի կոլ, ընկնի մեջ իմ սրտին.
Թաշքարա անեմ, վախենամ՝ ենի ձի հաղթի»։
Քամկի տեխեն դախտիկ թըլեց,
Պառվու ծծեր բռնեց, քամեց.
Արուն—արընճուր եկավ տուս ծծերուց
Պառավ ասաց.
— Ախ ես հիմացիր էր Դավիթ սպաներ են,
Ես Դավթի զարմի դարբերն ի ձի խասավ։
Ասաց իմ ծծեր թող տուր
Մի աղջիկ ունեմ Գոհար խաթուն.
. . . . . .
Թող տուր, իմ աղջիկ տամ քե
Մհեր թող էտու

Ա. 47

Այդ նույն պատումում (Ա. պատում) Մհերը հանդիպում է մի այլ պառավի, որ ցանկանում է վրեժխնդիր լինել Մհերից իր սպանված յոթ տղաների համար։

Գնաց խասավ մեկ ճամբխի միջին,
Տեսավ՝ պառավ մածնի շերեփ բռնի ձեռ եկավ.
Մհեր ասաց.—պառավ հո՞ր տերթաս.
Պառավ ասաց. հոր տերթամ.
Ես լսիր իմ Դավիթ սպանած ին,
Դավիթ յոթ տղա ձի սպանիր ի
Ես լսիր իմ Դավթին մեկ տղա կա՝ անուն Մհեր—
Տերթամ, երկու էսա մածնի շերեփով

Զարկիմ վար Մհերի գլխուն,
Սպանիմ, որ իմ սիրտ խովանա։
Մհեր ելավ զպառավ բռնեց,
Ոտ էգի վար ոտաց,
Զպառավ ճղեց, էրավ երկու կտոր,
Էթալ էնդեխ՝ գնաց։
Ա. 46—47

Մի ուրիշ պատումում այս պառավի արտաքինը պատկերվում է հետևյալ կերպ։

Սլան գացին ճամբխի մեջ
Տեսան պառավ մի թումբան խանի,
Թրյի թվքերուն
Մածնաթաթախ շերիփ բռնի ձեռ, կու գա։
Ա. 104.

Այս նույն պառավը մի այլ պատումում կաղ է։
Վերջ մեկ պառավ կըգա, որ թոփալ էր։
Ա. 1021

Մհերն այնուհետև հանդիպում է Հալեբ քաղաքի քառասուն դևերին (մի քանի այլ պատումներում հսկաներին) և նրանց խնդրանքով սպանում նրանց մարդակեր քրոջը, որը երկար ժամանակ թագավորում է Հալեբում։ Վիպասանները այս պառավին նույնպես, որ բնական է, այլանդակ կերպարանքով են ներկայացնում։

Մհեր էնդեղ նստուկի
Տեսավ՝ մեկ բանձր պառավ ըմ եկավ։
Ա. 233

Մի քանի այլ պատումներում Հալեբ քաղաքի թագավորը խաբեությամբ բռնում է Մհերին և գցում է հորը, որպեսզի հետո քարկոծի ու վրան հալած կապար լցնելով սպանի։ Այդ մասին իմանում է մի պառավ. օգտագործելով նրա վիճակի ծանրությունը նա խոստանում է ազատել նրան, եթե Մհերը ազատվելուց հետո պսակվի իր յոթ աղջիկների հետ, որոնցից փոքրը հարյուր տարեկան է։ Մհերը դիտակցելով իր վիճակի ծանրությունը խորամանկում է. համաձայնվում է պառավի առաջադրած պայմանին, բայց ազատվելուց հետո սպանում է թե պառավին և թե նրա աղջիկներին։

Մեկ պառավ կեր քաղքի մեջ.
Էդ պառվուն յոթ ախչիկ կեր,
Պստիկ ախչիկ հարիր տարեկան էր.
Պառավ եկավ Մհերին ըսեց.
— Արճիճ է քամած, կը հալին, որ լնուն վրեդ
Ըսեց.— ըբա ի՞նչ անեմ պառավ.
Ըսեց իմ ախչիկներ կառնի՞ս,

Որ բերիմ իմ ախչիկներ քըզի հանեմ.
Ըսեց.— կառնիմ, գնա քու ախչիկներ բի.
Մեկ լե շիրիդ բի հետդ ի.
Պառավ գնաց, առավ ուր յոթ ախչիկ
շիրիդ հետ, եկավ։
Եկան կայնան հորու վրեն
Ու շիրիդ կախին հորու մեջ։
Մհեր կապեց շիրիդ ուր մեջք, քաշին, հանին,
Ու ժողովեց ախչիկներ ու պառավ, լցեց հորու մեջ։
Բ. 39

Մի քանի պատումներում նա պառավին և նրա աղջիկներին սպանում է նախ այն պատճառով, որ վախենում է, թե նրանք կարող են մատնել իրեն, և ապա այն պատճառով, որ գարշում է իր հետ պսակվող աղջիկների այլանդակ կերպարանքից։ «Ես իմալ ենեմ, էդ ախչիկ որ չառա, էդ կնիկ պըդի մատնա ընձի, ըսե թե Մհեր կենդանի յա. լավն են ա, ախչիկ լը, մամ լը կտրիմ ուրունց վիզ, թալիմ հոր»։ Կտրեց, թալեց հոր ինք ելավ, գնաց» (Բ. 339)։ Մի այլ օրինակ. «Մհեր, ասում է պառավը, մի վերև իրիշկա ու տես, թե իմալ հուրի մալաքի մեկն ա, քու նշանածը, իմ ախչիկը։ Մհեր վերև իրիշկեց ու տեսավ, որ ընդուր վերևի մռութը մե արշինից լե երկեն ա, քնծղաց ինքն ուրան ու ըսեց. է բա իդա՞ պտի եղնի իմ նշանածը» (բ.բ. 219)։

Մհերի ու պառավների միջև տեղի ունեցած վերոհիշյալ բոլոր էպիզոդները նեղ, անձնական կարգի էպիզոդներ չեն և հետևապես սխալ է դրանց հիման վրա Մհերին համարել «չար, անխիղճ, վատ տեսարանների մեջ երևացող հսկայություն»[1]։ Այդ էպիզոդների իմաստն ավելի խորն է ու լայն, քան թվում է առաջին հայացքից։ Ժամանակակից ասացողների մտածողության ազդեցությամբ որոշակի փոփոխության ենթարկվելով և նոր հիմնավորումներ ստանալով հանդերձ՝ Մհերի ու պառավների միջադեպերը իրենց հիմքով կապված են նախնադարյան հասարակության զարգացման երկու գլխավոր էտապների՝ մայր իշխանության ու հայր իշխանության էտապների հետ, և հանդիսանում են դրանց միջև տեղի ունեցած հակամարտության արձագանքները։ Պառավները տվյալ դեպքում իրենց վարքագծով ու արտաքին նկարագրով ներկայացնում են մայր իշխանությունը, իսկ Մհերը՝ հայրիշխանությունը։ Այդ հաստատվում է մի կողմից հայր իշխանության էտապին բնորոշ հերոսականությամբ, որի մարմնացումն է Մհերը, մյուս կողմից մայր իշխանության էտապի պրիմիտիվ (պտուղների հավաքում և որսորդություն) տնտեսական հիմքի վրա բարձրացող նույնքան պրիմիտիվ մտածողությամբ (միֆոլոգիայի) ստեղծված կերպարների արտաքին անհամաչափությամբ ու այլանդակությամբ, որոնք բնութագրական են վերոհիշյալ պառավներին ու նրանց պառաված աղջիկներին։ Նրանցից մեկը ներկայանում է, ինչպես տեսանք «ծծեր ինչխ շան լակոտ», ուսերին դցած հրեշի կերպարանքով, մյուսը «թումբանը թեքերուն» կաղ ու կիսախենթ կնոջ կերպարանքով, երրորդ մեկ «բանձր», մարդակեր պառավի տեսքով, չորրորդը «վերևի մռութն մե արշինից լե երկեն» այլանդակի տեսքով և այլն։ Մայր իշխանության շրջանի միֆը և նրա ստեղծած «կերպարները» հիշ-

[1] Լեո. Դավիթ և Մհեր, էջ 34, Մոսկվա, 1891։

յալ այլանդակությունից բացի իրենց վրա կրում են նաև բացահայտ սարսափի կնիքը, այն սարսափի, որն ապրում էր նախամարդը բնության անհասկանալի, կործանարար և ստեղծարար ուժերի հանդեպ ունեցած անզորության հետևանքով։ Իսկ եթե ի լրումն այդ բոլորի նշենք, որ պառավներից մեկը միշտ ներկայանում է «մածնաթաթախ շերեփը» ձեռքին, մյուսները Մհերին հորում կերակրելու համար «հաց հավաքողի» (այս դեպքում ոչ մուրալու իմաստով), իսկ Գոհարի մայրը հացթուխի դերում, ապա պարզ կլինի, որ մենք ի դեմս այդ պառավների գործ ունենք մայր իշխանության էտապում տնտեսության մեջ և հետևապես ամբողջ կոլեկտիվում կենտրոնական դեմք հանդիսացող կանանց հետ։

Պետք է նշել, սակայն, որ չորրորդ ճյուղում հանդես եկած պառավներն ու պառաված աղջիկները չեն ներկայացնում մայր իշխանության ոչ սկզբնական և ոչ էլ մանավանդ բուռն զարգացման էտապը։ Նրանք ներկայացնում են մայրիշխանության վերջին էտապը միայն, որտեղ կանայք այլևս վճռական դեր չեն կատարում տնտեսության մեջ ու հասարակական կյանքում։ Այժմ այլևս տղամարդիկ չեն համախմբվում կանանց շուրջը, կախում չունեն նրանցից, որովհետև հանդիսանում են տնտեսության ու կոլեկտիվի կենտրոնական դեմքն ու առաջատար ուժը։ Մայր իշխանության ժխտումը հույների մոտ հասավ նույնիսկ այն բանին, որ նրանք կանանցից վերցրին ոչ միայն նրանց տնտեսական ու հասարակական իրավունքները, այլև ծննդաբերության ֆիզիոլոգիական հատկությունը, որն արտահայտված է Աթենաս Պալլասին իր գլխից ծնելու հայրիշխանության հզոր աստված Զեսի արարքում։ Այդ պայքարի հետքերը մեր էպոսում չեն մնացել իրենց կլասիկ կերպարանքով, որովհետև մեր էպոսը գրի է առնվել 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած։ Բազմաթիվ գծեր ժամանակի ընթացքում աղավաղվել են ու բոլորովին անհետացել։ Սակայն եղածներից էլ պարզ երևում է, որ կինը հետ է մղվում նաև իբրև էգ։ Շատ բնորոշ է, օրինակ, որ վերոհիշյալ պառավներից մեկը իր աղջիկներին ցանկանում է ամուսնացնել Մհերի հետ ոչ թե նրան հրամայելով, ինչպես մայրիշխանության օրոք էր, այլ խնդրանքով. «Մեկ պառավ կեր քաղաքի մեջ, էդ պառվուն յոթ ախչիկ կեր... պառավ եկավ Մհերին ասեց.—իմ աղջիկներ կառնիս, որ բերիմ իմ ախչիկներ քզզի հանեմ հորից» (բ. 99)։ Մայրիշխանության անկման տեսակետից չափազանց պերճախոս է նաև այն փաստը, որ Մհերին հանդիպած բոլոր կանայք բացառությամբ Գոհար խաթունի, ծեր են, պառավներ են։ Այդպիսին են Գոհարի մայրը («գնաց տեսավ մեկ պառավ նստի խաց կթխի»), Մհերից վրեժխնդիր լինելու ցանկությամբ լցված կինը («գնաց, տեսավ պառավ մածնի շերեփ բռնի ձեռ եկավ»), քառասուն հեկանների մարդակեր քույրը («տեսավ մեկ բանձր պառավ եկավ») և Մհերին հորից աղատող կինը («մեկ պառավ կեր քաղքի մեջ»)։ Պառաված են նաև ճյուղում հանդես եկած աղջիկները։ «Էդ պառվուն յոթ ախչիկ կեր, պստիկ ախչիկ ճուրիր տարեկան էր»։ Կանանց և աղջիկների այսօրինակ համատարած ու ընդգծված պառավությունը գեղարվեստորեն սիմվոլացնում է մայրիշխանության պառավությունը, նրա ծերանալու և արդեն իր դարն ապրած լինելու պատմական իրողությունը։ Այսպիսով ճյուղում հանդես եկած պառավներն ու պառաված աղջիկները իրենց վարքագծով, արտաքին նկարագրով ու էությամբ ներկայացնում են մայրիշխանության խարխլումն ու անկումը, որը,

սակայն, կատարվում է ոչ թե խաղաղ ձևով, այլ ջղաձգումներով ու օրհասական կռվով։

Պատմական զարգացման պրոցեսի հենց այս առանձնահատկության վերապրուկն է հացթուխ, մարդակեր, մածնի շերեփը ձեռքին պառավների և Մհերի միջև տեղի ունեցած ընդհարումները, այն խոր ատելությունն ու անվերապահ ժխտական վերաբերմունքը, որ տածում են նրանք Մհերի նկատմամբ իբրև իրենց մահացու թշնամու։ Նրանցից մեկի արտաքուստ ջերմ վերաբերմունքը (յոթ աղջիկների տեր պառավ), մյուսի խոսակցության հանգիստ ու սիրալիր տոնը (մարդակեր պառավ), Մհերի հետ հաշտվելու երրորդի (Գոհարի մայր) «բարեկամական» վարքագիծը հետագա հավելումներ են և բխում են նրանց «կերպարների» ու վարքագծի նախնական իմաստի աղավաղումից։ Նրանց հարաբերություններն ընդունելով գերադանցապես իբրև սովորական պառավների և սովորական հերոսի հարաբերություններ՝ վիպասանները ակամա պատճառաբանել են իրենց համար անհասկանալի մանրամասներ։ Դրա հետևանքով էլ պառավներն ստացել են որոշ համակրելի գծեր և Մհերի համար դարձել ոչ ամենևին թշնամական անձեր։ Սակայն իրականում այդպես չէ և նրանք այն չեն, ինչ թվում են առաջին հայացքից։ Նրանք, ըստ էության, Մհերի թշնամիներն են, բայց ոչ անձնական, ինչպես մեկնաբանում են ոմանք ու այդ պատճառով էլ հանգում նրա կերպարի սխալ բնութագրմանը, այլ հասարակական-սոցիալական կարգի թշնամիներ են և ամեն րոպե պատրաստ են ոչնչացնել նրան։ Այդ խորապես գիտակցում է Մհերը և նրանց մոտենալիս գրեթե միշտ ցուցաբերում է մեծ զգուշավորություն։ Այս տեսակետից պատահական չեն, օրինակ, վախից առաջացած այն ներքին վարանումները, որ ապրում է նա հացթուխ պառավի վրա հարձակվելուց առաջ, ինչպես նաև այն, որ պառավի վրա վերջ ի վերջո հարձակվում է ոչ թե դիմացից, այլ թիկունքից։

Մհեր վախեցավ ասաց.
Թը գախտիկ ըլլիմ, ենու ծծեր յոնեմ,
Տելնի կոլ, ընկնի մեջ իմ սրտին.
Թաշքարա անեմ, վախենամ՝ էնի ձի հաղթի.
Քամկի դեխեն գախտիկ թըլեց,
Պառավու ծծեր բռնեց քամեց...
Ա. 47

Բերած օրինակից և այդ կարգի բազմաթիվ այլ օրինակներից պարզ երևում է նաև, որ հացթուխ պառավը կոչնչացներ Մհերին, եթե չենթարկվեր հարձակման թիկունքից։ Բայց այդպես չի եղել և չէր էլ կարող լինել, որովհետև դա կհակասեր պատմական ճշմարտությանը։ Այս և մյուս բոլոր պառավները պարտվում են և անխնա սպանվում։ Բախումների այդօրինակ լուծումը խորապես գեղարվեստական է, քանի որ նրանց պարտությամբ ու սպանությամբ սիմվոլացվում է պարտությունն ու կործանումը այն էպոխայի, որին նրանք ներկայացնում են։ Այստեղից հետևում է, որ Մհերի տարած հաղթանակը նեղ և անձնական կարգի ինքնարավ հաղթանակ չէ, այլ խորը գաղափարայնությամբ տոգորված սոցիալական կարգի հաղթանակ է։

Այլ կերպ ասած, եթե պառավների պարտությամբ ու սպանությամբ սիմվոլացվում է մայրիշխանության կործանումը, ապա Մհերի հաղթանակով

աղամարդկային անհատի առաջնությունն ազդարարող նոր էպոխայի՝ հայրրշխանության հերոսական էպոխայի հաստատումը։ Այս է Մհերի ու պառավների միջև տեղի ունեցած էպիզոդների իսկական իմաստը, որը հակառակ որոշ գրականագետների ու ֆոլկլորիստների ոչ թե ստվերում, այլ պայծառացնում է նրա կերպարը, դարձնելով նրան ավելի վեհ ու ավելի հերոսական։

Մհերի կերպարը բարդ է, բայց միևնույն ժամանակ խորապես նպատակասլաց ու ամբողջական։ Փոքրագույն խզում կամ հակասություն չկա ժողովրդի սոցիալական ազատագրության իդեալը մարմնավորող, այդ իդեալի իրականացման համար մարտնչող, իր անմահությամբ ժողովրդի անմահությունը սիմվոլացնող և ապագային պայծառ հավատով նայող հասունացած Մհերի ու թշնամական միջավայրը ժխտող մանուկ Մհերի միջև։ Ընդհակառակն, հասունացած Մհերն իր արարքներով և էությամբ հանդիսանում է հզոր, արյունը ձեռքում սեղմած, իրեն շրջապատող մեծամեծների երեխաներին ու քեռիներին սպանող մանուկ Մհերի տրամաբանական ավարտը։ Այդ արարքները հերոսի միևնույն էության տարբեր դրսևորումներն են նրա զարգացման տարբեր հասակներում։ Մհերի կերպարի ամբողջականությունը չեն խախտում նաև հոր, պառավների և ընտանիքի պատիվն առևանդող ու ոտնահարող հարստահարիչների դեմ մղած կռիվները։ Ահա թե ինչու անհիմն են նաև նրա կերպարի հակասականության ու երկվության մասին հայտնված կարծիքները, ըստ որոնց հավասարության նշան է դրվել Մհերի և Միհրի միջև, ժողովրդի հետ ու ժողովրդի համար պայքարող էպիկական հերոսական կերպարի և վաղուց մեռած հավատալիքի միջև։ Այս ֆորմալ նույնացման հետևանքով Մհերին վերագրվել են այն գծերը, ինչ ունեցել և ինչ հետագայում կարծեցյալ «դիվացման» հետևանքով ձեռք է բերել Միհրը։ Այլ կերպ ասած Մհերն էլ Միհրի նման դարձվել է և բարի, և չար, այսինքն՝ բնավորությամբ երկակի ու հակասական, որոնք, ինչպես արդեն տեսանք, անհիմն են և ժխտվում են էպիկական Մհերի էությամբ ու արարքներով։